43-ՐԴ ՆԻՍՏ

10 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են՝ Մինիստր-նախագահ, ներքին գործոց, իրավարարության, ֆինանսների, զորական և լուսավորության մինիստրները:

Նախագահը կարդում է օրակարգը:

Մինիստր-նախագահ - Կարդում է Դրոյի հեռագիրները վրաց զորքերի կողմից սկսված գործողությանց մասին Բորչալվի ու Լոռիի շրջանում և ուզունլարցիների հեռագիրն այն մասին, որ իրենց գյուղը ռմբակոծվում է վրաց զորքի կողմից: Ապա Մինիստր-նախագահը ասում է, որ այդ գործողությունների համար Հայաստանի կառավարությունը բողոքել է վրաց կառավարության: Սոց. դեմ. ֆրակցիան առաջարկում է օրակարգի մեջ մտցնել և քննել զինվորականների և թուրքահայ գաղթականների քաղաքային առաջիկա ընտրություններին մասնակցելու խնդիրը: Որոշվեց վաղը ցերեկով արտակարգ նիստ նշանակել՝ այդ հարցը քննելու համար:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Ա. Ֆինհանձնաժողովի կողմից զեկուցում է Խ. Կարճիկյանի ընտանիքի ապահովության մասին եղած օրինագիծը, ըստ որի հատկացվում է 75 հազար ռ. հիշյալ նպատակի համար: Բ. Հանգուցյալ Վիշինսկու ընտանիքի ապահովման օրինագծի մասին, որով 25 հազար է հատկացվում: Գ. Հայաստանի հեռագրական գործակալություն հիմնելու օրինագծի մասին:

Ա. Շահմազյան - Զեկուցում է զինվորականների աստիճանավորման մասին եղած օրինագիծը:

Զեկուցված բոլոր օրինագծերն էլ ընդունվում են խորհրդարանի կողմից:

Բժ. Գ. Տեր-Հակոբյան - Բժշկասանիտարական հանձնաժողովի կողմից տալիս է զեկուցում Հայաստանի տերիտորիայում և, առանձնապես, Երևանում գոյություն ունեցող տարափոխիկ հիվանդությունների և դրանց դեմ կռվելու միջոցների մասին:

Այս առթիվ լինում են կարծիքների փոխանակություն, որից հետո ընդունվում է դաշնակցական ֆրակցիայի առաջարկված բանաձևը. «Լսելով բժշկասանիտարական հանձնաժողովի զեկուցումը, խորհրդարանը հրավիրում է կառավարության ուշադրությունը դրության վրա» և [խորհրդարանը] անցնում է հերթական հարցերին:

Նիստը փակվեց գիշ[երվա] ժ. 10-ին:

«Զանգ», 29 դեկտեմբերի 1918թ.